

# ԽՈՒՉԱԿ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

գրութիւնները, որոնք եւ չեն դարձուի՝  
պէտք է իրենց «խոսակի» վարչութեան  
Բոստոն  
Administration dn «Khouag» Rousthouk

Պաշտարանի հասարակ տարեկան 10 փր.

« վեցամսեան 5 «

Օսար երկիրներու հասարակ տարեկան 12 «

« « « վեցս. 6 «

## ՅԻՄԱՐ ՅՈՅՅԵՐ

Եւրոպական լրագիրներէ կը տեղեկանանք որ, ամբողջ անկիւսական երկիրներու, եւ մասնաւորաբար Լոնտոնի մէջ Թագուհին դահակալութեան 60 ներքու տարեգարծին առթիւ մեծ հանգէսներ տեղի ունեցած են: Բոլոր թերթերը այս առթիւ խմբագրականներ կը նուիրեն, եւ առնցքէ շատերը կարծես հասկցնել կուզեն թէ, եթէ այս Թագուհին չը լինէր անգլիան ուրիշ մի լան կը լինէր այժմ՝ առկէ աւելի գէշ: Այս լոյրը լաները կարգաւորով ծիծաղ մը կ'անցնի մեր վրայէն. կը ծիծաղինք մեծ ժողովրդի մը պատիկ գործերը տեսնելով: Եթէ Անգլիան տարեգարծը կամ յոյեանը, որը միտաւոր լուսաւորիչ մը եղած ըլլար, կամ անխոնջ աշխատող գիտուն մը, որ մարդկութեան ոգտակար ծառայութիւններ մատուցած ըլլար իր գիտներով՝ մենք կը հասկնայինք այդ լայն դահակալ մը որ ոչինչ նշանակութիւն չունի աշխարհի յառաջդիմական շարժումին մէջ, որը շարունակ ու պառած է ու չէ արտագրած եւ կամ

արտագրած է միայն ատառոյներու երամ մը, որոնք աղբին վրայ շատ սուղի նստած են՝ այդ չենք հասկնար. չենք հասկնար մանաւանդ, երբ այդ կըլլայ միահամուռ կերպով ժողովուրդի մը կողմէ, որ մեծ անուանված է:

Կրեն թէ Թագուհին տակաւին հանգիստը կերպով պալատէն դուրս չեկած՝ գրութիւն մը ուղղելով բաժնէ «ամբողջ սրտովս շնորհակալութիւն կը յայտնեմ իմ սիրելի ժողովուրդին» որպէս թէ հովիւր իր ոչխարներուն ըրած բլար. մենք ինչ կարող ենք բառաւ աշխարհներէ, որոնք դեռ իմ ժողովուրդս կ'ըսեն իմ կովերս բաւում են. եւ ի՞նչպէս շնորհակալ չըլլալ այն կովերէն, որոնց կաթովը կը սնուցանէ իր ծոցէն ելած իշխանները, դուքսերը եւ դքսուհիները, որոնցմով եւրոպան ողողած է եւ որոնք մէյմէկ փորձանքներ են ամէն տեղ ժողովուրդին գլխուն: Այս աւելի դարմանալի է հոչակաւոր ֆենդերաբրիյի ետիկոպոսին իր փայլուն ղեկաւորութիւնը՝ ճիւղեր իշխաններէ շրջապատուած Թագուհին մեծ փառքով եկեղեցի առաջնորդելը, ինչ՝ եկեղեցի եւ ինչ՝ յիւսանէութիւն. իցիւ թէ Քրիստոս անգամ մ'ալ աշխարհը գալով տեսնէր թէ, իր ամէնուն համար հաւասար հաւատած ճաճարը ինչպէս թաաբոնի մը վե-

րածուած է, ուր իւրագանջիւր դաւա-  
կարդ իր աւտիճանովը ու պատիւովը  
կ'ընդունուի. և այն ալ ամէնէն աւելի  
գրիւտոնեայ և բարեպաշտ երկրի մը  
մէջ:

Այս բնդհանուր համակրական ար-  
տայտութիւններուն վրայ մենք այն-  
քան չը ախտի դարմանայինք եթէ  
այդ չը լինէր երկրի մը մէջ, ուր  
մարդ հակառակն ալ կրնայ ընել եթէ  
իր մտածումը կամ գագցումը տարբեր  
է: Ո՞վ գիտէ Շէգսիւրի, Պայրնի, Սթէ  
ֆնանի, և տակաւին շատ ուրիշ աւոնց  
նման ճշմարիտ անկիւնացիներու հայ-  
րենիւն մէջ՝ այն միջոցին, ուր նա-  
խապաշարումի մը կուրորէն հետեւե-  
լով և հին կուսակալներուն պէս գեր-  
ւնային ոյժ մը մտածելով մահ ու ա-  
րիւնէ լացկացած՝ մեզ պէս էակի մը  
մէջ բնդհանուր համակրանքի ցոյցեր  
կրլլան, անոր համար, որուն միակ ար-  
ժանիւն է շատ ապրած բլլայր, և ա-  
մենէն մեծ առաւելութիւնը՝ ապագոյ-  
ներու բանակ մը ստեղծելը, որքան  
մարդիկ կան, որ իրական ճշմարիտ  
ծառայութիւններ մատուցած են մարդ-  
կութեան ու թող համակրանքի ցոյցի  
մը, շատ անգամ պատառ մը հացի  
ալ կարօտը կը քաշեն և չը արուիր  
իրենց:

## Ը Ղ Կ Ե Ր Վ Ա Ր Ա Կ Ա Ն

### Ե Ր Ե Ի Ո Յ Թ Ն Ե Ր

Պարապ տեղը կը պնդեն կարգ մը  
միամիտներ, թէ բնկերվարականու-  
թիւնը գիտական օրէնքներու հակա-  
ռակ եղջերուաքաղ մըն է լոկ որ չի  
կրնար իրականութիւն գտնել:

Ունեւորներն ու իրենց վարձկան

հետեւորդները իդուր չարամտութիւնը  
կը գատապարտեն բնկերվարականե-  
րը, յամհած լացարտութեամբ մը բ-  
ւելով թէ անոնք պարզապէս ցնորա-  
խոհներ են որոնք կ'ուղեն հաւատաւել  
մարդոց համար անանկ լուսի և լինու-  
վի հաւաւարութիւն մը որ չիկայ լը-  
նութեան մէջ:

Այն օրէնքը Մարքսը անտեւական  
յեղաշրջութեան օրէնքները պարզեց,  
ամէն անկախ ու անկառու միտք բն-  
գունեց, թէ բնկերվարականութիւնը  
կատարելապէս համաձայն է ճշմարիտ  
գիտութեան հետ և կը պահանջէ ամէն  
անհատի գոյութեան իրաւունքը ապա-  
նովել և ամեն մարդու միջոց ու հնա-  
րաւորութիւն տալ իր Ֆիդիպական և  
լարոյական բոլոր պէտքերը յիսկատար  
կերպով պահանջելու:

Իրաւունքի և ճշմարտութեան խը-  
րոխտ ձայնը որոտաց աշխարհի ամեն  
կողմ և յայտարարեց, թէ ալ ևս ժա-  
մանակն է որ հարստահարուած դաւա-  
կարդը, ամբողջ աշխատաւոր ժողո-  
վուրդը, իր նախապաշարումներու խան-  
ձարուրը նետէ և չը հաւատայ լարո-  
յականի առտ վարդապետներուն որոնք  
հետեւորութեամբ ուռեցած խենդ ու խե-  
լառ խաւիքով կը պնդեն, թէ աա-  
ռապանքը նախախնամական անհրա-  
ժեշտ տարր մըն է առանց որուն մենք  
երջանկութեան գիտակցութիւնը իւկ  
չպիտի ունենայինք:

Ճշմարիտ մարդասիրութենէ մղու-  
ած, համոզումի և գիտակցութեան  
տէր բնկերվարական քարոզիչը կուրծք  
տուաւ ամէն հալածանքի, և յատակ ու  
պարզ խաւքով հաւկցուց, թէ բաւական  
չէ ըմբռնել որ մարդկային բնկերութ-  
իւնը կը չարչարուի ամէն օր. բաւական  
չէ բնդունիլ որ պէտք է լարելաւել  
բնկերական ներկայ ապականուած կաղ-  
մակերպութիւնը. այլ պէտք է որոշ

ու համարձակ կերպով յայտնել, թէ ուսկի՞ց առաջ կուգայ լուսն չալ՝ Կր և ուր է անոր համապատասխան իրական դարմանը:

Անիկա ցոյց առաւ թէ հողը, արտադրութեան գործիքները և հարստութիւնը առի մը ծոյլ մարդոց սեփականութիւնը դառնալով, առ հաւարակ ամեն երկրի բնակիչներուն ստուար մեծամասնութիւնը սարկացուցած են տեսակ մը աւատականութեամբ որ իր անարդար և մահալեր առաձնաշրնորհումներն ունի:

Եւ հիմայ՝ շորհիւ բնկերվարական գործիչներու լուսամիտ և մարտաշունչ բրդակահտային, աշխարհի ամեն կողմ բանտորը կ'ըմ'ունէ, թէ ինքը միջին դարու ճորտէն տարբերութիւն մը չունի, անարդ գերի մըն է պարզապէս և իր լազուկները, սիրտն ու միտքը քանի մը դատարկապարտ ու ձրիակեր դրամատէրներու ծախուած են պատառ մը չոր հացի գնով:

Ընկերվարականութեան հոսանքը կը գտնէ հեղհեղտէ անանկ ընդարձակ ու նշանաւոր ծաւալ մը որ է՝ լաւատես պուրժուային անգամ մտահոգութիւն կը պատճառէ այսօր:

Գիւղացին՝ որ իր գրտինքով կը ջրէ արտը առանց անոր մէջ թիղ մը հող ունենալու, խեղճ մ'չակը՝ որ ցորենը կը ցանէ որպէս զի ուրիշները ուտեն կամ ծախեն, պարզ լանտորը՝ որուն գուրը երկնքին անկուածէ վճարելիք անհարկի տուրքերու լեռին տակ, այսօր՝ բնկերվարականութեան գրչակին տակ ոգեւորուած՝ իր ւտրուկի գլուխը վեր կը լարձրացնէ և կը պահանջէ որ մարդու մը պէս աշխատենք զինքը և գոնէ ապէկ վճարեն իր տաժանելի յոգնութեան վարձը:

Աւատրիայէն, Հունգարիայէն, Իտալիայէն վերջերս հասած Հեռագիրներ-

ըր կը հաւատատեն, թէ ամէն կողմ ժողովուրդը ինպստա բնկերվարականութեան տեսչոտ գործունէութիւն մը ցոյց կուտայ և ամէն օր հսկայ գործադուլներ տեղի կունենան:

Մանաւոր հունգարիոյ մէջ ամբողջ երկրագործ դատակարգը, կատարեալ համերաշխութեամբ և յամառաւար կը շարունակէ իր գործադուլները, անանկ որ կաւալարութիւնը շուարած վիճակ մը ունի և չգիտեր, թէ ինչ միջոցի գիմէ հունձքերը քաղել տալու համար:

Ամէն օր տեղի կունենան նորանոր ձերբակալութեւններ, հալածումներ լայց կարելի չըլլար աշխատաւորներուն մէջ անհամաձայնութիւն կամ հերձուած առաջ բերել:

Եւ ինչ որ ծիծաղելի է՝ հողատէրները տեսնելով որ պիտուրներու միջոցով չեն յաջողիր ժողովուրդին հետ գլուխ ելլել, կը գիմեն կղերներուն փայրաւիլով այն անմիտ յոյսը՝ թէ այս վերջինները թերեւ իրենց խորհրդաւոր վարդապետութիւններով և նենգաւոր խորամանկութեամբ կարող կ'ըլլան լարեմիտ աշխատաւորը որաւ և դանի համոզել որպէս զի իլ իւ հլու հպատակ՝ անխայթ խղճմտանքով զինքը չարաչար կեղեքողներուն հնազանդի և յանձն առնէ անդի ժողով, ուրիշներու հաշուոյն, օրական 12 ժամ աշխատիլ լարկ արեւուն այրող ճառագայթներուն տակ:

Սակայն ժողովուրդը կղերներուն դէմ ալ ցոյց կուտայ իր հաւատաւորութիւնը և մաիկ անգամ չընեն այդ մակալ ոյժ արարածները որոնք զրաւոր դաշնակիցներն են դրամատէր դատակարգին և հաւասար անխղճութեամբ կը հարստահարեն ու կը կողոպտեն զինքը:

Այս բնագիմութիւնը լացարձակ

ապացոյց մըն է, թէ կամաց կամաց իրենց հեղինակութիւնը կորսնցնել բւական է նոյնքան թիւով քան իրենց համար եւ որոնք անտարակոյս երկար երջանկութեան երազներ կազմած էին:

Ապացոյց մըն է, թէ կոյր ամուսինը հին ու փառաւոր խաչերով չի գնահար եւ իկան է ալ եւ հաւանալ իր վիշտերուն եւ չարչարանքներուն հիմնական ու գիտական պատճառը որ ի հարկէ պիտի աշխատի վերջնէ՝ հետահետէ արթննալով, եւ որք որ դարացներով այն միջոցները որոնք կը պաշտպանեն զինքը ամէն հարատաւարող դատարարի դէմ:

Միւս կողմէն՝ ամեն երկրի մէջ ժողովուրդին դէպի ճամարիտ բնկերվարականութիւնը ցոյց տուած համակրութիւնն ու զաշակերութիւնը կողմերից յոյս մը կրնան տալ մեզի, թէ կարծուածին չափ հեռու չէ այն ուր՝ ուր ներկայ անհատական ծայրայեղ եւամոլութեան պիտի յաջորդեն բնկերական համերաշխութիւնը, արդար աշխատանքն ու վայելքը եւ ուր մարդիկ պիտի ապրին լիութեան միւսնոյն միջոցներով մէջ:

Լ.

## ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ե՛

## ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Յիսուս տարի, իրենց անհետաւ եւ անճամոլ ունակութեան մէջ ճնշուած ժողովուրդները թողուցին զիստադէտներուն եւ կառավարութիւններուն գործելու եւ ցիւցիւալու: Եւ իրերու գործութիւնը վերստին տիրացաւ իր իրաւունքներուն, մեզ ստիպելով՝ ինչպէս գետերուն զառթալը կը քշէ ջուրերը, թէ՛ յաղթողին եւ թէ՛ պարտ-

եալին համար աղետալի պատերազմի մը, կոտորելով հազարաւոր անհատներ, որոնք հաւանականաբար կեանքի ուրիշ ծրագիր մը յօրինած էին իրենց համար եւ որոնք անտարակոյս երկար երջանկութեան երազներ կազմած էին:

Մեռնողները եղան հաւաքական սխալանքի քաւիչ զոհերը. բայց անոնք՝ որ ամէնէն աւելի ծանր կերպով կը քաշեն անոր ծանրութիւնը, երկրորդ Կայսրութեան ժամանակակիցներուն զաւակներն են, որոնց պատմութիւնը անգամ կ'անգիտանան, եւ ոչ թէ այս ժամանակին պալատականները, պաշտօնատարները, պաշտօնեաները, շահագէտները, արժէթուղթերու գործ ընողները, հասառուները, (մեր դժբաղդութիւններուն առաւել կամ նուազ հեղինակներ կամ մեղսակիցները) որոնք շահեցան կայսրութեան բարգաւաճումէն եւ հանգարտ կերպով մեռան իրենց անկողինին մէջ:

Շատ հեռաւոր մարգարէ մ'ըլլալու պէտք չկայ գուշակելու համար թէ կը դիմենք ողբալի յեղափոխութեան մը, զոր կը վճեն տնտեսական տաժանքը, մասնագիտականութեան անխելքութիւնը, անկումը եւ թշուառութիւնը: Անոնք՝ որ ժամարտապէս պատասխանատու են ասոր, արութեան եւ բանաւորութեան տարիքը հասած քսանը հինք տարեկանն սկսեալ քաղաքացիներն են: Անոր զոհ ըլլալիքները պիտի ըլլան անոնք, որ պիտի ապրին միւս դարուն առաջին քառորդին մէջ, եւ որոնց շատ անկարելի պիտի ըլլայ արդիւնել, ինչ որ ալ ըլլան իրենց անհատական իմացականութիւնը եւ կորովը, որ իրերը չըլլան այնպէս ինչ որ մենք ըրած ենք:

Երեսայ մէկը անիծել գոյութիւնը. բնութիւնը եւ իր սերողները, մերձաւորները եւ համագործակցները, մէկը չկրնար սակայն ուրիշ ճամբայ մը բռնել որ չըլլայ համերաշխ անոնց հետ, պատասխանատու անոնց համար նոյն իսկ իր էութեան սերտութեանը (inimité) մէջ: Եւ օտար էակներու հետ համերաշխ կամ անոնց համար պատասխանատու չըլլալու, իր ճաշակին եւ կամքին համեմատ իր անհատական ճակատագիրը կազմելու համար, պէտք չէր բնակիլ այն մոլորակը, ուր կը գտնուի մարդ երկոտանին:

Պէտք էր լուսինին մէջ երթալ:

Մագման եւ ծննդեան անոգորելի ճա

կատարականութիւններէն վերջը կուգան ընկերական, այսինքն վիճակի, պարագաներու, եւ միջավայրի, ճակատագրականութիւնները, որոնք նպաստաւոր կրկան կամ աննպաստ, եւ որոնք մեծապէս կը ներգործեն անհատական ճակատագիրին վրայ եւ զայն կրնան չափ տարբեր անկէ որ կրնար ըլլալ: Ուղեցին այնպէս ըսել թէ ստմկապետական կ'ընտան մեր հաստատութիւնները՝ նուազած կամ ջնջած էին այս ճակատագրականութիւնները: Անոնք միայն փոխեցին ասոնք: Իրբեւ համոզիչ օրինակներ մէջ կը բերեն վարի դասակարգիւն աստջ եկած չափ մը վերջէն տեսածներ, որոնք մեծ հարստութիւն չիզած են կամ հասած են բարձր պաշտօններու: Եթէ մին ուշադրութեամբ քննէր իրենց պարագան, պիտի տեսներ որ մեծ մասը նպաստաւորուած են պարագաներէ, որոնց ծնունդ տալու տէր չէին, եւ հաստատութիւններէ գորս ստեղծած ըլլալու արժանիքը չունին, մինչդեռ ուրիշներ՝ որոնք արժանի էին լատալոյն ճակատագիրի մը, նկատողութեան առնելով միայն իրենց կարողութիւնները, իրենց նկարագիրը եւ իրենց ատաքինութիւնները, չեն նպաստուած մի եւ նոյն հաստատութիւններէն եւ մի եւ նոյն պարագաներէն:

Իրերու արդի վիճակը իսկապէս նպաստաւոր է շահախնդիր ոգիի տէր եւ ուրիշին ու ընկերութեան վիճակին անտարբեր դանդաղ միջակ անհաններու: Բայց ծննդական ճիւղը մէջ այսպէս ըլլալը: Մարդս՝ ուղեւորը միջակ չէ, ինչպէս կամքովը չէ որ ունի միջակ հասակ. պզտիկները չեն կրնար բնաւ բարձրանալ մինչեւ հոս, ոչ ալ մեծերը հոս խոնարհելու: Եւ ձեռնարկու, զաղափարի տէր աստջ նետուող, ինքնօրինակ անձերու համար միջակութիւնը նպաստող իրերու կարգաւորութիւնը այնքան ազեալի ճակատագրականութիւն մ'է որքան պարզ, միամիտ գիւրահաւան, անշահախնդիր կամ ուրիշներուն յղացածները զործագրելէ տարբեր բան մ'ընելու անկարող խեղճ մարդերուն համար: Նպաստած անհատները կրնան զո՞ր ըլլալ եւ իրերու վիճակը ընտիր դանել. անոնք որ՝ ընդհակառակը կը կրնան այս միջակութիւններուն նպաստաւոր ճակատագրականութիւնները, չեն կրնար ունենալ ոչ՝ իրենց կարծիքը եւ ոչ՝ իրենց զոհունակութիւնը:

Անհատը, ինչ որ ալ խորհին աչք մասին

անհատականականները, մինակ չէ աշխարհի մէջ եւ չուզեր ալ ըլլալ: Ընդհանրապէս, կը ջանայ զուգաւորիլ տարբեր սեռէ էակի մը հետ գոնէ, — երբ չատերու հետ չէ, — եւ միամտօրէն հպարտ ուրախութիւն մը կարտայայտէ երբ տղաքներ ունենայ: Միաւորութեան մէջ, ըլլայ այս՝ ամուսնութիւն, անպակ կենակցութիւն կամ կապակցութիւն, անհատը ամբողջ չմնար, թէեւ ինք այնպէս կարծէ եւ ուզէ: Երնայ կազմութեան եւ գործարաններու կողմէ մնալ ինքը, այսպէս չմնար բարոականապէս. ինչպէս որ մարմինները պահելով մէկտեղ իրենց ներքին բնութիւնը, կը փոխեն յատկութիւն երբ կը զգայնակուին (sensibilises) յոյսէն ելեկտրականութենէն, կամ ուրիշ բնագիտական ազդակէ, այսպէս ալ անհատը կ'ազդուի իր զգայնականութեան, իր կարծիքներուն, իր նկարագիրին, իր կամքին մէջ այն էակէն որուն հետ մէկտեղ կը բնակի: Եթէ այս պատճառին համար է որ ստեղծող դասակարգերու (castes) բնականութեան պայման կը խորհէին առաջուց իրենց զուակներուն ամուսին կամ կին եղողներուն ընտրութեան վրայ եւ նոյն իսկ իրենց կապակցութիւններուն վրայ: Ընտանիքները կրնային խաբուիլ եւ անտարակոյս յաճախ կը խաբուէին անձերը գնահատելուն մէջ, ինչպէս՝ կապակցութիւններու կամ միութիւններու հաւանական հետեւութիւններու գնահատութեան մէջ. բայց այս մասին իրենց սխալանքը արգելք մը չէ որ այն դիտողութիւնը՝ որուն համեմատ կը արամբանէին, ա՛յնքան ճիշդ ըլլար որքան իրենց ունեցած կարծիքը այն կարեւորութեան վրայ, զոր կնոջ գերը ունի մարդուն ճակատագիրին մէջ, կամ էրիկ մարդուն գերը՝ կընոջ ճակատագիրին մէջ:

Հոն է պատմութիւնը հաստատելու համար այս դերին կարեւորութիւնը, որ կը տարածուի անհատի մը ճակատագիրէն ամբողջ Ժողովուրդի մը ճակատագիրին: Եւ ինչ որ ճշմարիտ է վեհապետներուն, իշխանազլուխներուն, աիքդատորներուն, պետերուն, պաշտօնատարներուն համար, ճշմարիտ է նաեւ ամէն մէկ քաղաքացիին համար: Ամբողջ տարբերութիւնը անոր մէջ կը կայանայ որ քաղաքացիներուն կրած ազդեցութիւնը նուազ ճայն ունի: Եւ միայն անհնական եւ ուղղակի ազդեցութիւն մը չէ որ

կը կրէ անհատը՝ իր շարունակական կամ յաճախական բնականացութեանը մէջ. մեր-  
ձաւորներուն անուղղակի ազդեցութիւնը  
կայ տակաւին: Ամուսնանալով կնոջ մը հետ,  
մարդ կ'ամուսնանայ գրեթէ միշտ ընտանի-  
քի մը հետ, որուն բնութիւններուն, ճա-  
շակներուն, կարծիքներուն վերջապէս կը  
մասնակցի որոշեալ չափով մը: Դանօթ ա-  
ռածը՝ «ըսէ՛ ինձ որուն կը յաճախես, ես  
քեզ պիտի ըսեմ թէ՛ ո՛վ ես» շիտակ է ան-  
հատներու շատին համար: Այսպէս կարելի  
է մարդիկ դատել, ընդհանրապէս, իրենց ա-  
մէնէն յաճախակի յարաբերութիւններով, ո-  
րոնց մէջ կը մտնեն իրենց բուն ընտանիքը  
եւ այն՝ որուն հետ խնամեցած են:

Շատ ստոյգ է որ քանի մը անհատներ կը  
խուսափին այս կերպ ազդեցութիւններէ եւ  
ունին զգացումներ ու որպիսութիւններ բո-  
լորովին տարբեր իրենց շուրջը գտնուողնե-  
րուն եւ իրենց հարազատ կամ որդեգրական  
ընտանիքին զգացումներէն եւ որպիսութիւն  
ներէն: Բայց ատոնք բացառութիւններ են.  
եւ որովհետեւ մարդ չկրնար դատել բացա-  
ռութիւններուն համեմատ, արդարեւ կայ ի-  
րաւունք ենթադրելու թէ անհատները ա-  
ռաւել կամ նուազ մեծ չափով մը կը նմա-  
նին անոնց, որոնց հետ կը համախմբին  
կամ խնամի կ'ըլլան, ինչ որ առաջիններուն  
մասնակից ընելու կերպ մ'է վերջիններուն  
պատասխանատուութիւնը:

Լաւ է ազատիլ նախապաշարումներու ա-  
նիւրաւ եւ շատ խիստ մասերէն: Բայց պէտք  
է ընդունիլ որ նախապաշարումը՝ ճիշդ գի-  
տողութեան մը կամ ընկերական հարկի մը  
հանրացումն է գրեթէ միշտ: Իրնայ ըլլալ  
որ անհատականութեան կարգ մը վարդա-  
պետականներ առաջ մղեն տրամաբանութիւ-  
նը մինչեւ պահանջելու ժառանգականու-  
թեան եւ ժառանգութեան ամբողջական ջն-  
ջումը, նոյն իսկ անունին, եւ մինչեւ ան-  
հատին բացարձակ կզգիացումը, ազատելու  
համար զայն ուրիշին ամէն ազդեցութենէն  
եւ հետեւաբար ամէն օտար պատասխանա-  
տուութենէ: Բայց մեծ մասը անոնց, որոնք  
անհատական պատասխանատուութեան կու-  
սակիցներ հաստատուած են, չեն երթար

մինչեւ հոն: Պարոն Թիլլիքս Թօր ամէնէն ա-  
ռաջ պիտի ծափահարէր Ռօլանի Աղ-  
ջիկը, որ ժխտումն է այն խնդիրին որ կը  
պաշտպանուի իր ջատագովներէն, որովհե-  
տեւ չպիտի կրնար պահանջել որ Կանըլոնի  
զաւակը պատասխանատու կարենայ ընծայ-  
ուիլ այն մատնութեան, զոր աւանգաւէպը  
կը վերագրէ անոր հօրը: Գրեթէ ստոյգ է  
որ հանրապետութեան նախապահը քիչ գոհ  
պիտի մնար ունենալով իր քով, զաւառա-  
կան պաշտօնական հացկերոյթի մը մէջ,  
ճիւմօլարի որդին, եթէ գիպուածով այնպէս  
պատահէր որ այս վերջինը զարձած ըլլար  
հարուստ անասնաբոյժ մը՝ պարզեւի արժա-  
նացած պարարտ կենդանիներու մրցումնե-  
րուն մէջ, եւ թէ իրեն դժուար պիտի գար  
Պատուոյ Լէգէոնի պատուանշանը յանձնել  
կառափնատուած (guillotiné) ին որդիին,  
եթէ այս՝ ոսկի մետալներ ընդունած ըլլար  
շատմը ցուցահանգէսներու մէջ իր արտա-  
գրութիւններուն համար: Շատ աւելին կայ.  
բոլորովին տեղի կայ կարծելու որ, եթէ ա-  
ռիթը ունենար, խոյս պիտի տար պատա-  
հելէ իշխանիմը, որ ինքզինք ճանչցուցած  
է միայն իր գիտական խուզարկութիւննե-  
րովը եւ ճաշակներովը, որովհետեւ այս գի-  
տունը իշխան մ'է եւ կը կոչուի Պոնաբարդ:

Անհատական պատասխանատուութեան  
խնդիրը՝ ինչպէս այս կարգի շատ մը խնդիր-  
ներ, հակասական է ուրեմն՝ գոնէ գործադ-  
րութեանը մէջ: Այսինքն թէ զայն մէջ կը  
բերեն, երբ շահ ունին զայն մէջ բերելու  
եւ կը մոռնան զայն երբ շահ չունին զայն  
յիշելու: Եթէ անհատական պատասխանա-  
տուութեան վարդապետութիւնը պաշտօնա-  
պէս ճանչցուէր, ընդունուէր եւ հռչակուէր-  
իւրեւ անմիջական արդիւնք պարտ էր ու-  
նենալ ընտանեկան անունին ջնջումը քա-  
ղաքական արձանագրութիւններուն մէջ:  
Ինչպէս նաեւ յաջորդական իրաւունքներուն  
ջնջումը:

ԺԱՆ-ԺԱԳ ԲՈՌՍՈ

Է Մ Ի Լ

Զայն լաւ հասկնալու եւ անկէ օգտուե-  
լու համար պէտք է վերադառնալ այն դարուն

(Ռօլանի Աղջիկը Տում, չորս արարուածով.  
ոտանաւոր գրուած, հեղինակ՝ Գերկոմս տը-  
Պորնիէ, այժմ անդամ Ժրանսական Ակադե-  
միայի):

ուր գրուած է, եւ այն նպատակին, որուն կը հետեւէր: Պէտք է անջատել անկէ գլխաւոր միտքը, ներշնչումը, մեթոտը: Ճարտարակութիւններու, առերեւոյթ անհեթեթութիւններու, նիւթական անկարելիութեաններու մէջէն պէտք է փնտռել ոգին:

Նախ սա՛ ըսենք որո՞ւնս՝ ժողովուրդին համար չէ՞ր գրեր: Նախնական ուսումը՝ իր ժամանակին գոյութիւն չունէր, կամ թէ այ՛նքան տարրական, այ՛նքան աննշան, այ՛նքան քիչ ստրածուած, այ՛նքան քիչ կազմակերպուած, այ՛նքան խեղճ տարրերու վերածուած էր որ խորհողներուն ուշադրութիւնը չէր գրաւեր: Ժողովուրդին տղաքները կը մեծնային ըստ բախտին, փողոցին մէջ, դաշտերուն մէջ, թշուառութեան մէջ, եւ մանկավարժական մեթոտներու խնդիր չէր կրնար ըլլալ այն տխուր արգելարաններու համար, ուր տղաքները շատ շատ կարգաւ կը սորվէին:

Երբ կը խօսուէր գաստիարակութեան, կրթութեան վրայ, խնդիրը միայն ազնուականներու կամ քաղքենիներու զաւակներուն վրայ էր: Ասոնք կարօտութենէ չէին նեղուեր, ստիպուած չէին իրենց ապրուստը ճարելու փութալ՝ իրենց առջեւ երկար տարիներ ունէին ուսնելու: Ասով մէկտեղ լաւագոյն կերպով չէին մեծցուեր, Հին սքոլաստիկեան մեթոտները դեռ կը տիրէին: Գոլէմները զաւրած չէին գերի երիտասարդութեան բանտը ըլլալէ: Նեղ գաւիթներու, հասարակաց ննջարաններու, մութ գասարաններու մէջ փակուած, շարունակ սանձահարուած, անխելք ու խիստ աշակերտութեան մը բռնի հպատակած եւ միշտ ուրիշին առաջնորդութեանը, ուղղութեանը ու խնայամակալութեանը ենթարկուած զպրոցականները կը մեծնային այնպիսի բռնութեան: մը մէջ, որ՝ մէկէն ի մէկ խորտակուելով իրենց մեկնելու պահուն, դիւրաւ ապերասանութեան ու յրբութեան կը փոխուէր:

Մասնաւոր ձգտում մը կար զպրոցականները դարձնելու այնպիսի երիտասարդներ, որոնք լաւ ձեւեր ունենային, ըլլային հաճելի, շատախօս, ոչնչաբան եւ կարող իրենց գիրքը մարդոց մէջ պահելու վայելչօրէն:

Ամէն ինչ կը գոհուէր ձեւին, ուշադրութիւն կը դարձնէին կերպերուն, կերպարանքին, ոճին: Ազդէ՛ բառերու, թուականներու, թուումներու առանձին հոգածութիւնը,

յիշողութեան մշակութիւնը, մակերեսութային եւ մեքենական ուսումները, թե լազրուած բանաձեւերը, յաղթական նախապաշարումը, :

Այս միջոցները՝ որոնք հակառակ են ողջ մտութեան, կանուխէն ՚ի դորձ գրուելով տըղաքներուն վրայ կրնային զասոնք գտրձնել տեսակ մը գիտուն կապիկներու կամ թուականներու, բայց չէին պատրաստեր մարդ ըլլալու:

Կա՛մ այն է որ տղան՝ առտնին դաստիարակութեամբ աւերուած, դարձած է տան բոնաւորը եւ պատուհասը. կա՛մ այն է որ տղան՝ գոլեմեան գաստիարակութեամբ է ճնշուած ու բառերով խեղդուած, բայց զուրկ է մտածումէ ու կամքէ: Այսպէս էր կրկին տեսարանը, զոր Ռուսօի դարը կը գնէր իր աչքերուն առջեւ:

Այս զեղծումները զարաւոր էին: Արդէն Ռապլէ եւ Մօնթէյնը՝ զանոնք մասնաւոր ըրած եւ բողբած էին իրենց ժամանակին, բայց անոնք քարոզուած էին անապատին մէջ:

Ռուսօ նորէն ձեռք առաւ ինչ որ անոնք թողուցին: Ուղեց ցոյց տալ թէ ինչպէս մարդ մը մեծցնելու է: Ատոր հասնելու համար կը ջնջէ անցեալը: Հեռի կը պահէ զինք սովորութիւններէ ու աւանդութեաններէ: Իրենց տեղը կը թողու գոլէմները ու սովորական գաստիարակութիւնը:

Կառնէ տղայ մը, կամ լաւագոյն է ըսել, տղան, այնպէս ինչպէս բնութիւնը զայն մերկ, սկար կը ձգէ աշխարհի վրայ — առանց պատմութեան հետ կապ, ընկերութեան հետ յարաբերութիւն, ընտանիքին հետ կապակցութիւն ունեցող տղան: Այդ տղան՝ իր տեսակին տիպն է: Ծնած ատեն հետը կը բերէ բոլոր կարողութիւններուն բողբոջը, զոր կեանքը պիտի բանայ հետզհետէ. չար չէ, որովհետեւ ոչինչ կը մղէ զինք այդպէս ըլլալու. մոլութիւններ չունի, որովհետեւ բնութիւնը չտար զանոնք, անոնք ամենը կուգան ընկերութենէն: Երկար է, պէտք է զօրանայ, բնութիւնը զայն ստեղծած է այդպէս ըլլալու համար: Պէտք է ուրեմն որ ոչինչ չարգիլէ բնութեան շարժումները. բնութիւնը կը յառաջանայ կանոնաւոր աստիճանաւորումով — նախ կը զարգացնէ մարմինը, յետոյ զգայարանները, ապա իմացականութիւնը եւ բանականութիւնը:

նը, վերջը զգացումը եւ խիղճը. Գաստիա-  
րակութիւնը պարտի կարգաւ հետեւիլ այս  
իջեւաններուն, առանց երբէք զանոնք փու-  
թացնելու կամ խառնելու եւ կամ անոնց  
կարգը ու շարունակութեանը չափաւորելու:  
Այս գաստիարակութիւնը ստանձնող գաս-  
տիարակն ալ տիպ մ'է: Սովորական վար-  
ժապետ մը չէ, գոյէժի ուսուցչապետ մը չէ,  
ուրիշներուն պէս ուսուցիչ մը չէ: Գաղափա-  
րական վարժապետը, գաստիարակն է, ըն-  
կերական կեանքէն դուրս նետուած ինքն ալ  
առանց ընտանիքի, առանց վայելքի, իր ա-  
շակերտին ոտքին կապուած, անոր կեանք-  
քին մասը կազմող: Մարդ մը չէ, մեթոս  
մ'է, նոյն իսկ մեթոսն է, բնութիւնն է՝ մար-  
դացած, հսկելու համար տղուն կանոնաւոր  
զարգացման:

Այսպէս, թանձրացեալ երեւոյթի մը տակ,  
մասնաւոր պատմութեան մը ձեւին ներքեւ,  
կը գտնուինք ընդհանուր գաղափարներու  
հանդէպ, գրեթէ կարելի է ըսել՝ իմաստա-  
սիրական կամ մանկավարժական էակներու  
հանդէպ:

Ազդէ է սր անկարելի է ուղղակի գործ-  
նականի վերածել Էմիլի գասերը. ազդէ է  
որ ակամայ կը քննադատուին այն տեսա-  
րանները եւ հնարքները. որոնց կը հան-  
դիպիս Էմիլիին մէջ. ազդէ՝ ա՛յնքան հա-  
կափառութիւններ, այնքան իրերու իրա-  
կանութեան վրաս:

Եթէ կարծես թէ կենդանի էակներու  
դիմաց կը գտնուիս, ճիշտ ինչպէս որ կը  
տեսնես առօրեայ փորձառութեամբ, այ-  
սինքն այն տղաքները՝ որոնք կը խաղան մեր  
բակերուն մէջ եւ այն ուսուցչապետները՝  
որոնք կ'ուսուցանեն, այն ատեն անկիւար-  
կելի գիրք մ'է այս: Բայց եթէ ինքզինքդ  
գտնես տեսականութիւններու, սկզբունք-  
ներու, գաղափարներու հանդէպ, այն ատեն  
ոչի՛նչ աւելի բանաւոր է ըստ ինքեան, ո-  
չի՛նչ աւելի բեղուն եւ գործնական:

Հոս բաւականաւով միայն երկրորդ գիր-  
քով, բնէնք որ այս կզբաղի մարդկային բը-  
նութեան կանոնաւոր զարգացման իջեւան-  
ներէն մէկով. այս՝ այն ժամանակն է երբ  
տղան տէր կը գտնայ իր անդամներուն,  
իր զգայարաններուն, զինք չըջապատող  
աշխարհին: Քանի մը տարուան այս ժամա-  
նակամիջոցին մէջ, լաւ կ'ըլլար եթէ որոշ-  
ուէին զանազան ժամանակներ, նշանակուէ-

ին բաժանումներ: Որովհետեւ այս՝ այնպի-  
սի տարիք մը չէ իրաւ, որուն ամբողջ տե-  
ւողութեան ատեն տղան ինքնիրեն նմանի:

Եթէ Ռուսո հաւատարմօրէն մեզ նկա-  
րագրէր տղաքները ինչպէս որ ծանօթ են  
մեզ, եթէ հետեւէր անոնց միտքին սովո-  
րական բնթացքին, եթէ նկատողութեան  
առներ տարրական ուսումները, զորս կու-  
տանք անոնց, շատ յստակօրէն պիտի նշա-  
նակէր բաժանումները՝ որոնք կ'որոշեն վեց  
տարեկան տղան՝ ութ տարեկանէն, ասիկայ՝  
տասը տարեկանէն, եւ այս վերջինը՝ տաս-  
ներկու տարեկան զպսցականէն:

Այնպէս չըբաւ Ռուսո, զբաղած ըլլալով ըն-  
դհանուր տեսութեամբ, այսինքն թէ մար-  
մինին զարգացումը եւ զգայարաններուն  
կրթութիւնը պետք է նախընթաց ըլլան մ-  
տաւորական զարգացումէն եւ բանականու-  
թեան գործածութենէն: Եւ այս տեսութիւ-  
նը ճիշդ է: Եւ զայս կը յուշնէ Ռուսո՝  
փաստելով, կիրքով, ապացոյցներու, ման-  
րամասնութիւններու, տրամաբանութիւն-  
ներու, օրինակներու առատութեամբ մը:

Այս երկրորդ գիրքին մէջ կը զգաս ի-  
րօք յառաջատուութիւն մը, կը գուշակես որ  
տղան կը մեծնայ, առաջին էջերուն մանկի-  
կը կը դառնայ աւելի զօրաւոր, աւելի ճար-  
տար, աւելի փորձառու, աւելի ուշադիր  
մանուկ մը: Եւ զգաս թէ նա՝ պիտի կարե-  
նար մտաւորական աւելի ճիգեր ընել, ա-  
ւելի շարունակութիւն ունենալ գաղափար-  
ներու եւ աշխատութեանը մէջ, որուն չեն-  
թարկուիր ուսուցիչին կողմէ, թէ կը բարձ-  
րանայ հետզհետէ իմացականութեան բնա-  
գաւառները, թէ նոյն իսկ հոն մտած պիտի  
ըլլար եթէ տեսականութիւնը չընդդիմանար  
ատոր:

Պէտք է, որպէս զի Ռուսոի ապացուցու-  
մը կատարեալ ըլլայ, տղան սահմանափակել  
չըջանակի մը մէջ, ուրկէ դուրս՝ չելլէ, բը-  
նա՛ւ չթողուլ որ մէկ ժամանակամիջոց մը  
գրաւէ ուրիշ մը: Այսօր մարմինն է, վաղը  
միայն, եւ ոչ աւելի կանուխ, պիտի ըլլայ միտ-  
քը, այսօր է անդամներուն մարզանքը, վա-  
ղը պիտի ըլլայ միայն բանականութեան  
մարզանքը. այսօր է ձեռքին, աչքին, ա-  
կանջին, քիթին, ճաշակելիքին կրթու-  
թիւնը. վաղը պիտի ըլլայ միայն իմացակա-  
նութեան բուն կրթութիւնը, գաստիարա-  
կութիւնը: